№ 39 ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ ՀՈԿՏԵՄԲԵՐ 21

1895

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ ՀՈԿՏԵՄԲԵՐ 21 № 39

«ՇԱՒԻՂԻ» տարեկան գինը 10 ղրան, կէս տարւանը 6 ղրան: Առանձին համարները 5 շահի:

Արտասահման տարեկան 8 ֆր. կամ 3 րուբլի կէս տարւանը 5 ֆր. կամ 2 րուբլի:

Ռուսաստանից փողի համար պիտի գիմել հետևեալ հասցէով. Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. Бекъ-Назарову.

ՇԱՒԻՂ

«ՇԱՒԻՂԸ» ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է 10-ից մինչև 2 ժամը. բացի կիրակի և տօն օրերից:

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով իւրաքանչիւր բառին մի անգամւայ համար 1 շահի: Արտասահմանի յայտարարութիւնները բառին 1 կոպէկ:

Նամակների, նաև Պարսկաստանի բաժանորդագրութեան հասցէ. Rédaction «CHAVIGH« Téhéran. (Perse)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱՑՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1896 ԹՒԻ

Գ. ՏԱՐԻ „ՇԱՒԻՂ“ Գ. ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Կը հրատարակվի Թէհրանում նոյն ուղղութեամբ և նոյն ծրագրով: «Շաւիղի» բաժանորդագինն է Պարսկաստանի համար մէկ թումա՛ն. կէս տարւանը վեց ղրան: Արտասահմանի համար 3 րուբլի կամ 8 ֆրանկ. կէս տարւանը 2 րուբլի կամ 5 ֆրանկ:

Ռուսաստանից դրամական ծրարները պիտի ուղարկեն անպատճառ հետևեալ հասցէով: Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ, пер. А. Бекъ-Назарову. Խնդրվում է ուշք դարձնել ճիշդ այս հասցէով և առանց մի բառ մոռանալու ուղարկել դրամները, այլապէս չեն ընդունւիլ: Եւրոպայից ուղարկել պէտք է փոխանակագրով կամ թղթադրամով. Հասցէն Եւրոպայի համար Téhéran, Redaction «CHAVIGH», այդ հասցէին պիտի լինի նաև Ռուսաստանից խմբագրութեան ուղղւած թղթակցութիւնները:

Ապառիկ բաժանորդագրութիւն ո՛չ մի դէպքում չէ ընդունվում:

Պարսկաստանի համար հասցէն Redaction «CHAVIGH», Téhéran.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Սպահանի Ամեն. վանքը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Մարաղայից. Նամակ Ուրմիայից. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Խառն լուրեր ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—Յայտարարութիւններ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ընթերցանութիւն՝ ինքնակրթութեան համար:

ՍՊԱՀԱՆԻ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԸ:

II

Գուցէ ընթերցողներից շատերը չը գիտեն, որ Սպահանի Ամեն. վանքի տպարանը, իր գոյութեան ամբողջ ընթացքում, միակ արժանաւոր գիրքը որ լոյս է ընծայել, Նոր-Ջուղայի մի պատմութիւն է որ գրել է 1871 թւին, վանքի առենադպիր Յարութիւն Տէր Յովհաննիսեանը: Հանգուցեալ հեղինակի այդ մեծ, երկհատոր աշխատութիւնը մի այնպիսի գործ է, որ ինքը միայն բաւական է ծածկելու տպարանի անգործունէութիւնը: Գործը շատ լուրջ աշխատութիւն է և հայ պատմական գրականութեան մէջ իր արժանաւոր տեղը ունի:

Հէնց այդ գրքի երկրորդ հատորումն է, ուր մենք գտնում ենք շատ մանրամասն տեղեկութիւններ Ամեն. վանքի մասին. ուր մի առ մի թւած են վանքի կալւածներն ու հասոյթները՝ քաղւած վանքի տետրակներից և դոկումենտներից: Բացի այդ ամենահաւաստի աղբիւրից, մեր առջև ունինք նաև երկու ուրիշ տետրակներ, որոնց մէջ թւած է 1894 և 95 թւի վանքական մուտքը: Այս վերջիններս հրատարակել է Եսայի եպիսկոպոսը, հասարակութեան հաշիւ տալու մտադրութեամբ: Քննենք նախ վանքական կալւածները:

«Պատմութիւն Նոր-Ջուղայի» աշխատութեան մէջ (գլուխ Զ. եր. 123,) յիշվում է, որ «ըստ հին ձեռագրի ցուցակի» վանքը պիտի ունեցած լինէր 27 կալւածներ, եկամուտ բերող այգիներ, տներ և այլն, որոնցից՝ 17-րդ դարի բռնութիւնների ժամանակ աւերւելով, ծախւելով և այլն, պատմագիրը իր օրերով, այսինքն մինչև 1871 թիւը, տալիս է մեզ 23 կալւածների մի ցուցակ, որոնցից 12-ը այգիներ են, 8-ը մուլքեր, 2-ը եկամուտ տւող եկեղեցիներ և 1-ը վանք: Համեմատելով այդ ցանկը Եսայի սրբազանի հաշւի մէջ ցոյց տւած ցանկի հետ, գտնում ենք որ 1894-ին վանքի կալւածներից 8 հատը անհետացել են, եթէ չը հաշւենք, որ մինչև 94 թիւը պէտք է աւելացած էլ լինէին, քանի որ 94 թւի հաշիւների մէջ նոր կալւածների անուններ են երևում: Ի՞նչպէս բացատրել այդ անհետացումները:

Բացի դրանից, բացի կալւածների բերած արդիւնքից, վանքը ըստ «Նոր-Ջուղայի պատմութեան», ունի հասոյթներ նաև դրամագլխի տոկոսներից: Այդ դրամագլուխներից առաջինը 1815 թւին մի ոմն Յակովբոս վարդապետի նւիրատւութեան արդիւնքն է, և կազմում է «տասն հազար սքայ ռուփի», որ և մնում է Կալկաթայի Նազարէթ եկեղեցու մէջ. իսկ ամէն տարի նրա տոկոսը գալիս է Ամեն. վանքին:

Երկրորդ դրամագլուխն է էլի 10,000 սքայ ռուփի, որ 1827 թւին կտակել է վանքին՝ Աղա Գէորգ Մանուկեան ջուղայեցին: Փողը պահվում է Կալկաթայի անգլիական դիւանատան մէջ և նրա տոկոսը, Նազարէթ եկեղեցւոյ «եկեղեցապանի» միջոցաւ (՞) հասնում է Ամեն. վանքին:

Երրորդ դրամագլուխն է Փիլիպպոս Խաչիկեանի տարեկան $111^{1}/_{2}$ «կումպանւոյ ոսկի» որը նոյնպէս վերոյիշեալ եկեղեցու ձեռքով ստանում է վանքը:

Գումարելով ստանում ենք 20,000 ռուփի դրամագլուխ և $111^{1}/_{2}$ ոսկի տարեկան եկամուտ միմիայն Հնդկաստանից:

1894 թւի Եսայի եպիսկոպոսի տւած հաշւի մէջ լիովին յիշւած չը կայ այդ դրամագլուխների կամ նրանց տոկոսների մասին, իսկ 95 թւի հաշւի մէջ գրւած է «ի Նազարէթայ Ս. եկե-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

(Ռուս պրօֆեսօրների կազմած մի ծրագրի առթիւ)

—

Աւելորդ չէր լինիլ ասել նախ, որ պրօգրամը առաջին անգամ հրատարակւեց 1894 թւի եկտ. 10-ին. մէկ ամսւայ ընթացքում 4800 օրինակը վերջացել էր: Երկրորդ տպագրութիւնն է մեր ձեռքի տակ մի քանի ամսից ի վեր և հաւաստի եմ որ գիրքը այժմ պիտի տպւած լինի երրորդ տպագրութեամբ իսկ, եթէ ոչ չորրորդն էլ: Գիրքը առ այժմ տալիս է հետևեալ ճանաչողութիւնների համար հարկաւոր՝ ընթերցանութեան ծրագիրը: 1) Բնական գիտութիւններ (ֆիզիկօ-քիմիական). 2) Կենսաբանական (biologie). 3) Փիլիսոփայական. 4) Հասարակական—իրաւաբանական 5) Պատմական. 6) Գրականական: Աւելի պարզելու համար, յանձնախումբը 4 մեծ մասերի է բաժանել ընթերցանութեան պլանը. 1) Բնական գիտութիւններ. 2) Գիտութիւններ՝ մարդու մասին. 3) Հասարակական—իրաւաբանական և 4) Պատմութիւն և Գրականութիւն:

Ես չեմ մտնիլ մանրամասնութիւնների մէջ, որ յանձնախումբը մէկ մէկ կանոններ է մէջ բերում, որոնց շնորհիւ ամեն մի ընթերցող կարող է յարաբերութեան մէջ լինել յանձնախմբի հետ, հարցեր տալ, բացատրութիւններ խնդրել, գրքեր փոխ առնել կարդալու ամսական մի աննշանին վճարով, մի հարց ընտրել ծրագրից և պատրաստելով իբր աշակերտ՝ ուղարկել յանձնախմբին քննելու և այլն և այլն: Դա մի ամբողջ կազմակերպութիւն է գիտութիւնը տարածելու համար, որ մի քանի տարւայ ընթացքում աւելի անգամ աւելի օգուտ կը տայ ռուս ժողովրդին, քան թէ այդ երկրի բոլոր դպրոցներն ու համալսարանները: Այսպիսի մի յանձնախումբ ներկայանում է իրենից մեծ բարիք այն ժողովրդի համար, ուր խոշոր տգիտութիւնը իր ճիրանների մէջ է առել միլիոնաւոր անհատների. ուր 80 միլիոն բնակիչ երի համար հազիւ 600 գրադարան կայ, մինչ 1 և կէս միլիոն Հիւսիսամերիկան ժողովուրդը աւելի քան 2000 գրադարան ունի իր տրամադրութեան տակ. մինչ, սրանից 40 տարի առաջ մարդակեր Նոր-Զէլանդիան, այժմ, որ 650,000 ժողովուրդ միայն ունի—400 գրադարանների տէր է... Այո, այդ յանձնախումբը իր գործունէութեամբ շատ աւելի կրթութիւն և ուսում կը տարածի, քան բոլոր համալսարաններն, անդեկավար կերպով ընթերցանութեան գրքեր մատակարարող գրադարաններն և գիտութիւններից զզւեցնող դպրոցները...

Մի հասկացողութիւն տալու համար թէ «Ծրագիրը» ինչպէս է առաջարկում ուսանելու մի ո և է ճիւղ, առաջ բերեմ գրքից մի կտոր—այն է պատմական մասնաճիւղը:

Գրքի սկզբում (եր. 22) նախ մի ամփոփ խրատ է տրվում պատմութիւնը ուսումնասիրելու ձևի մասին. թէ ո՛ր կէտերի վրայ պիտի ուշադրութիւն դարձնել և թէ ինչ օգուտ ունի պատմութեան այդ ձև ուսումնասիրութիւնը. թէ ինչ կերպով պիտի յաղթել պատահած դժւարութիւնները. թէ ինչ օժանդակ գիտութիւնների պիտի դիմել իբր լրացուցիչ պատմականի և այլն:

«Սիստեմատիկական ընթերցանութեան ծրագրի մասին մեր արած այս բոլոր նկատողութիւնները—վերջացնում է ցուցմունքը—կարելի է ամփոփել այսպէս:

Առաջին տարին ուսումնասիրել պէտք է.

Ա. Տարի:—Ընդհանուր տեսութիւն Մարդաբանութեան (anthropologie) և Նախապատմական քաղաքակրթութիւն. Արևելքի պատմութիւն. Յունական և Հռովմէական պատմութիւն:

Բ. Տարի ուսումնասիրելու,—Միջին Դար, Վերածնութեան դարի հետ. Ազգային պատմութիւն մինչև խառն մութ ժամանակները:

Գ. Տարի.—Նոր.դար՝ սկսած վերանորոգութիւնից մինչև Ֆրանսական յեղափոխութիւնը: Ազգային պատմութիւն XVII և XVIII դարերի:

Դ. Տարի.—Նորագոյն ժամանակներ, սկսած Ֆրանսական յեղափոխութիւնից. Ազգային պատմութիւն XIX դարի.

Ե. տարի (լրացուցիչ) Պատմութեան փիլիսոփայութիւն (մեթոդիկա) և ակնարկ պատմութեան փիլիսոփայութեան սիստեմների վրայ:—Կրկնողութիւն ազգ. պատմութեան:

(Կը շարունակւի)

ղեցւոյն Հայոց Կալկաթու ի հաշիւ Ս. վանացս առաքեալ (4750 րուփի) 12483 ղռանս: Թէ ի՞նչ հաշիւ է այդ, ո՞րտեղից, թէ ո՞րքան է դրամագլուխը եւայլն, ոչինչ չէ յիշած: Չէ՞ որ եթէ դա հաշւենք իբր տոկոս դրամագլխի նոյն իսկ 10%, կը ստանանք 47500 րուփի. եթէ երկու տարւան տոկոս՝ կը ստանանք 23750 րուփի դրամագլուխ: Ո՞րն է սրանցից ճիշտ. ո՞րքան է դրամագլուխը, ո՞ւրտեղ է նա գտնվում և կամ ինչպէս է շահագործվում,—ոչինչ յայտնի չէ ոչ մի տեղից:

Վանքի երրորդ հասոյթն է «վճարումն վիճակաւորաց, որ կոչի Ս.Թոռահաս», այսինքն ամէն մի վիճակաւոր քահանայ պարտաւոր է տարեկան մի որոշ տուրք վճարել վանքին: Եսայի եպիսկոպոսի տւած երկու հաշիւները անբացատրելի կերպով միմիանց հակասում են: Եթէ որոշեալ տուրք կայ, ինչու 94 թւին այդ տուրքը հասնումէ միայն 572 ղռանի, իսկ երկրորդ տարին (95 թ.) 5103-ի. եթէ կամովին է, ինչից է որ այդպէս ութնապատիկ աւելացել է 95 թւին: Արդեօք միշտ էլ այդպէ՞ս կը լինի.—բացատրութիւն չը կայ:

Դրանից յետոյ գալիս է կալւածների մուտքը, որը պէտք խոստովանել, Եսայի եպիսկոպոսը նշանաւոր կերպով հասցրել է մի խոշոր գումարի և տարէ ցտարի աւելացրել: Մինչև 94-ը անյայտ է. այդ թւին 6329 ղռան, իսկ 95-ին արդէն 8450 ղռանի է հասել:

«Պատմութիւն Նոր-Ջուղայի» գրքի մէջ յիշւած է մի մուտք եւս «Տէրութեան պարգև» անունով, որ 1853-ի հրովարտակով՝ 150 թուման պիտի լինէր տարեկան: Դրա մասին ոչ մի խօսք չը կայ Եսայի եպիսկոպոսի հաշիւների մէջ. Ի՞նչ է եղել այդ տարեկան արդիւնքը. ո՞վ է կլանում նրան:

Այժմ մնում է մի ակնարկ եւս ձգել զանազան նւիրակութիւններից, պտղիներից և նւէրներից եւայլն. գոյացած արդիւնքների վրայ: «Նոր-Ջուղայի պատմութիւնը» մի առ մի թւում է թէ իր ժամանակին իւրաքանչիւր վիճակ ո՞րքան արդիւնք էր տալիս իբր պտղի: Նրանից յետոյ մինչև 23 տարի ոչ մի հաշիւ յայտնի չէ: Գրիգորիս եպիսկոպոսը ուռեցրել է այդ փողերով իր գրպանը, ուռեցրել է վանքին շրջապատող ուրիշ պարագլուխների գրպանը. զանազան աղաներ ու գողեր յափշտակել են վանքի փողերը, կերել նրա եկամուտները և ինչպէս Եսայի եպիսկոպոսն է յիշում իր 94 թւի տեղեկագրի յառաջաբանում՝ «անշուշտ աղայ, խան և սարթիպ տիտղոսիւք ճոխացեալքն ի Ջուղա, փոքր ինչ շառաւղունելոց են»... 1894 թւի հաշւից է, որ մենք քիչ գաղափար ենք կազմում վանքի եկամուտների մասին պտղիներից և նւէրներից եւայլն: Կամենալով մի որոշ ռոճիկ ունենալ, Եսայի սրբազանը առաջնորդին պատկանելիք եկամուտները թողել է վանքին և իրեն նշանակելէ տարեկան 1000 թումանի մի խոշոր, վերին աստիճանի անխիղճ ռոճիկ: Անխիղճ՝ որովհետև իր ուտելիքն ու ապրուստն էլ վանքից էր ստանում, տարեկան մօտ 500 թուման դրա համար ծախսելով: Այդ մասին յետոյ. այսքան անենք առ այժմ, որ առաջնորդական հասոյթը կազմում է միմիայն 7983 ղռան, մինչ դրա փոխարէն առաջնորդը ստանում է մօտ 15000 ղռան: Գալով վիճակային արդիւնքներին, մենք հաշւից տեսնում ենք միայն տարեկան 1704 ղռան, մինչ 1871 թւին գոյանում է եղել դրանից աւելի (տես Պատմ. Նոր-Ջուղայի, հատ. բ.):

Դեռ չենք յիշում Հնդկաստանի և այլ բազմաթիւ կողմերից հասնող մեծագումար կողմնակի նւէրները:

Արդ. եթէ մի ընդհանուր հայեացք ձգենք Ս.Ամեն. վանքի եկամուտների վրայ, աչքի խփող աղբիւրները կունենանք հետևեալները:

23 կալւածներ (8-ը անհետացած): 20000 րուփի Կալկաթայում դրամագլուխ, որ բերում է ամենաքիչը 2000ր. եկամուտ: Գուցէ ուրիշ դրամագլուխներ եւս կան, որոնք մեզ յայտնի չեն:

Բաթաւիայում ունեցած հաստատութիւններ, թէ տպարանին և թէ վանքին 23437,47 գիլտր, որ բերում է 537 գիլտր եկամուտ (ինչու այդքան քիչ): Ի՞նչ «հաստատութիւններ» են դրանք—յայտնի չեն: Վիճակաւոր քահանաներից, առաջնորդական հասոյթք, անտառից, խանութներից, վաճառւած փայտից եւայլն առ նւազն՝ 20000 ղռան վեր ի վերոյ հաշւով:

Այսպէս Ս.Ամեն. վանքը չը պիտի ունենայ տարեկան եկամուտ 10000 թումանից պակաս եթէ ոչ շատ և շատ, գուցէ կրկնակի աւելի: Եւ որովհետև երբէք հասարակութեան չէ տրւած այդ վանքի եկամուտների մի կանոնաւոր ցանկը, նրա ստացւածների ցուցակը, և որովհետև Ս.Ամեն. վանքը մօտ 2—300 տարւան վանք է, որ ունեցել է շատ մեծագումար արդիւնքներ ու հարուստ կալւածներ, չէ՞ որ ծիծաղելի է ենթադրել, որ ճիշտ պիտի լինի այն հաշիւը, որ մեզ ցոյց է տալիս թէ վա՛նքը այժմ պատրաստ փող ունի մի խղճալի 900 թումանից ոչ աւելի գումար:

Հասարակութեան քթին ծիծաղո՞ւմ են վանքը կառավարող կամ նրա արդիւնքները ծծող պորտաբոյծները. միթէ կարծում են որ ներկայ անտարբերութիւնը երկար է տևելու և վերջ ի վերջոյ դիմակազերծ չէ անելու ազգային դրամները կլանողներին, որոնք տարիներից ի վեր, անպատիժ կերպով թալանում են Ս.Ամեն. բազմահարուստ վանքի արդիւնքները:

Ո՞ւր են նրանք, ի՞նչ են եղել անհետացած կալւածները, ո՞ւր են եկամուտները կամ հաւաքւող գումարները. ո՞ր կոկորդների մէջ են մտնում կամ ո՞ր աւազակ աղայի գրպանը ուռեցնում...

Ափսոս է այն անձը, որ կարող լինելով մատնանիշ անել վանքը կողոպտողներին՝ կը լռէ...

Բայց մենք դեռ ասելիք ունինք. Հարկաւոր է դեռ ցոյց տալ որ վանքը այդքան եկամուտներ ունենալով հանդերձ, ունի մի ամենաչնչին ծախս և որ այդքան գումարները ո՛չ թէ ծախսւել են մի որևիցէ ընդհանրական նպատակի կամ իրեն վանքի վրայ, այլ որ նրանք կուլ են գնացել վանքը շրջապատող ով գիտէ ինչ տեսակ—կրօնաւո՞ր թէ աշխարհական —աւազակների....

(Վ. Փ.)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՈՒՐՄԻԱՅԻՑ

Այս դէպքից յետոյ, տեղի ունեցաւ մի ուրիշ աւելի խայտառակ դէպք, Տ. Գ-ի գլխաւոր աջակցի շնորհիւ, որըպատճառ եղաւ Ուրմիոյ „Հայկական ընթերցարանական ընկերութեան“ քայքայման:

Գուցէ ընթերցողներից շատերը վերոյիշեալ ընկերութեան անունն անգամ լսած չլինեն, ուստի ես հարկ եմ համարում մի քանի տեղեկութիւններ տալ նրա մասին:

95 թւի յունիս 12-ին, նախկին գործակալ Աբգար Տ. Եղոյեանցը հրաւիրում է հայ վաճառականներին ուսումնարան և նոցա առաջարկում է կազմել մի ընկերութիւն, որը կարողանար գոնէ մի քանի թերթեր ստանալ, որով կարողանային յագեցնել իրենց ընթերցասիրութիւնը:

Նոքա եւս համաձայնում են և այդպիսով կազմվում է մի ընկերութիւն, որը կրում է իր վերայ «Ուրմիոյ Հայկ. ընթ. ընկ.» անունը: Այս ընկերութիւնը սկսում է ստանալ „Մշակ“ “Նոր-Դար“ „Շաւիղ“ և „Արձագանք“ (այս վերջինը ստանում են իբրև ընծայ պ. Աբգարից) և «Արաքս» հանդէսը: Այս ընկերութեան քայքայումն էր որ տեղի ունեցաւ սեպտ. 20-ին հետևեալ կերպով:

Տ. Գ-ը և իր աջակիցները, նորա պաշտօնանկ լինելուց յետոյ, սկսում են վատաբանել, ամբաստանել նախկին գործակալին որը վարում էր միևնոյն ժամանակ նոյն ընկերութեան գանձապահութեան պաշտօն:

Այս տեսնելով, պ. Աբգարը ներկայացնում է իր հրաժարականը ընկերութեան ընդհանուր ժողովին: Բայց ընկերութիւնը չի ընդունում նորա հրաժարականը. նա վերստին շարունակում է իւր պաշտօնը:

Տ. Գ-ի գլխաւոր աջակիցը, որ միևնոյն ժամանակ վարում էր և ընկերութեան քարտուղարութեան պաշտօնը, տեսնելով որ չը կարողացաւ այդպիսով պ. Աբգարի վարկը ձգել՝ շաբաթներով մտնելով նորա—նորա խանութը, գրգռում է անդամներին, որ յետ ստանան իրենց անդամավճարները (ի հարկէ անթիւ անհամար ամբաստանութիւններ բարդելով պ. Աբգարի վերայ) վերջապէս կարողանում է ոմանց համոզել, իսկ ոմանք էլ կամովին հետևելով, գնում և յետ են ստանում իրենց անդամավճարները. այդպիսով ընկերութիւնը լուծվում է:

Վերոյիշեալ դէպքից յետոյ, Տ. Գ-ի գլխաւոր աջակից [illegible] շտապում է դիմել Յովսէփ Ա[illegible] մի նամակով, որի մէջ ի հարկէ հակառակ կերպով բացատրում է եղելութիւնը, և իր բոլոր յանցանքները բարդում է նախկին գործակալի վերայ: Այդպիսով պ. Աբգարի և միւսների մէջ պառակտումն, թշնամութիւն է ձգում, որով և փակվում է Ուրմիոյ հայոց մի դասարանեան դպրոցն էլ, որը անցեալ տարի ունէր մօտ 15 աշակերտներ: Այդ աշակերտներն այժմ փողոցներում թափառում են: Ինչպէս լսում ենք Տ. Գ-ը շուտով պիտի գնայ Բարանդուզի գաւառը, որտեղ դեռ նրա գործունէութեան լաւ ծանօթ չեն, գուցէ կհիրող լինի մի առ ժամանակ լաւ կեղեքել այդ գաւառի հայ գիւղացիներ, որոնք թւով 300 տնից աւելի են:

Լուր է պտտում, որ շուտով Սալմաստի «Փայտուն!» վարդապետը այստեղ պիտի գայ:

Քաղաքումս անհամբերութեամբ սպասվում է Հաջի-Սամը Դովլային, որը նշանակւել է Խոյ, Սալմաստ և Ուրմիա գաւառների դատաւոր և այժմ գտնվում է Սալմաստում:

Հազիւ հազ քիչ-քիչ դադարում են գողութիւններ և սպանութիւններ, որոնք սովորական էին մի երկու շաբաթ սրանից առաջ: Դորա (այսինքն հանդարտութեան) պատճառը համարվում է Հաջի-Սամը Դովլայի գալուստը, որը իր երկու անգամեայ դատաւորութեամբ մեծ համարումն է ստացել Ուրմեցւոց աչքում:

Լար.

ՆԱՄԱԿ ՄԱՐԱՂԱՅԻՑ

6 Հոկտ. 95

Արսէն վրդ. Վեհունին մեզ մօտ էր գալուն պէս բեմի վրայից յայտարարեց թէ ինքը մեր քաղաքումը մնալու է միայն երկու-երեք օր, բայց այդ երկու-երեք օրը դարձաւ ութ օր, և նա այդ ութ օրում ոչինչ գործ չտեսաւ: Եկաւ միայն լաւ, պատւական գինի խմեց, քեօք, կարմրացրած հաւեր կերաւ և 40 թուման էլ փող գնալիս հետ տարաւ: Որ ասում ենք թէ ոչինչ գործ չտեսաւ, չենք ուզում ասել թէ ոչ մի գործի ձեռնամուխ չեղաւ. եղաւ, բայց չինէր այն լինելը:

Նմանօրինակ քաջագործութիւններ, հրէշային սխրագործութիւններ որ Սալմաստումն էլ կատարել էր, կատարեց և այստեղ: Երկու հատ օրինակ. 1) Երկու տարի առաջ, եթէ չեմ սխալվում, մի որբ, դռներում մնացած, բայց գեղեցիկ ու խելօք աղջկան, բռնի կերպով ամուսնացնում են մի համբ, անլեզու տղայի վրայ:

Բնական բան է որ դրանք միմիանց սրտի զգացումներն ու խորհուրդները չիմանալով, իրար լեզուն չհասկանալով եօլա չպիտի կարողանային գնալ և չկարողացան էլ այդպէս: Բայց «Սեաբաբքեա ի տունը քանդւի», ինչպէս որ բացականչում էր ինքը կինը. ամեն օր կռվում, իրար էին թակում: Քանիցս անգամ կինը յուսահատութիւնից ուզեցել էր իրան գցել ջրհորի մէջ, բայց շուտով վրայ էին հասել և չէին թողել

Վերջերս էլ այնքան ծեծ էր կերել որ փխլել ապաստանել էր արժ. Տէր Տաճատ քահանայի տանը: Ամիս ու կէս էր որ Տէր Տաճատ քահանայի տանն էր լինում, որ վերջապէս վարդապետը լոյս ընկաւ այստեղ: Թշւառ կին. երբ վարդապետի գալը լսեց ուրախացաւ, ասաց. «լաւ է, ցաւիս մի դարման կան»: Բայց ինչ: Վարդապետը անմիջապէս, առանց քննութեան, հրամայում է իւր ծառային որ գնայ կնոջը քաշի տանի իւր անօրէն ամուսնու տունը: Կինը որքան ընդիմադրում է, որքան աղերսում գլուխ չի դալի. անգութ ծառան ուժով տանում ձգում է ամուսնու տանը: Համբիկ էլ բերել է տալիս և առաւօտից մինչև երեկոյ թանտարկում գոմում: Ոչ համբն է համզգւում և ոչ էլ կինը: Բայց վարդապետը երկուսին էլ սպառնալիքներով և բանի ընդունեցնել է տալիս: 2) ժառանգական մի դատ վրճռելիս՝ ոտնակոխ է անում 15 տա եկան մի անտէր, անօգնական պատանու արդար իրաւունքները: Պատանին, ինչպէս լինում է, համարձակւում է այս խօսքն ասել վարդապետին. «Ես ինչու ես եկել դու այստեղ, որ մեր իրաւունքները չես պաշտպանելու»: Հայր սուրբը կատղում է այդ իրաւացի յանդուգն պատասխանից հրամայում է պարսիկ զինւորին, որին Թաւրէզից հենց իւր հետն էր բերել, մի լաւ ծեծել յանդուգն պատանուն: Հ. ամպնը խստութեամբ կպատժւում է:

Մեր քաղաքի կրթական գործին էլ քիչ վնաս չը տւեց ձայր սուրբը. առանց ժողովրդի առանց մեծամասնութեան կամքն ու գիտութիւնն իմանալու, աւելի ուժ տւեց տգէտ հոգաբարձուների ձայնին, որ կրկին տիրացու Յօնանը վարժապետ լինի:

Ի՞նչ կարող է անել մի ժողովուրդ —որը սովորութիւնը բնաւորութիւն է դարձրել իրեն,—բռնակալ, շահամոլ ազանեի դէմ: Ժողովրդի համարեա թէ կէս մասը, որը նոր նոր հասկացել է Յօնանի տգէտութիւնը, երկիւղից ծածուկ անկիւններումն է խօսում միայն:

Բայց շուտով այստեղ եաւ՞ գուն, գործունեայ երիտասարդներից կկազմւի մի խումբ, որը մտադիր է ամէն կերպով սանձահարել մեր ագաների բռնակալական ձգտումներն ու անխիղճ կամայականութիւնը. երկրորդ մտադիր է նա յիշատակներ առաջ բերել այստեղի դպրոցական գործի մէջ և տարենը մի քանի հատ էլ ներկայացումներ տալ յօգուտ զանազան բարեգործական նպատակների: Այդ խմբին յաջողութիւն ենք մաղթում:

Նիրզալի.

ՑՐՄՆԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Մարաղա 6 հոկտ. 95

Քաղ աւէք մեզ խնդրեմ ձեր թերթի միջոցով յայտնել մեր խորին շնորհակալութիւնը հետևեալ անձանց՝ որոնք իրենց նպաստներով օգնեցին մեզ բանալու Միանդապում ազգային դպրոց:

Միանդապի ժողովուրդը 203 դռան, Գաղավերանի ժողովուրդ 25 դռան, եղբարք Տէր Յովհաննէսեան 40 դռան, Թովլացի ժողովուրդ 120 դռան, մհի. Լալա Տէր յակովբեան 50 դ. պ. Յ. Նազարբէկեան 100 դ., պ. Յ. Տէր Յակոբեան 50 դ., Տիկին Հաւփսիմէ Կրինֆելս 200 դ.; պ. Ենովք բժշկեանց, պ. Մ. Դ. Աֆթանդիլեանց. պ. Խ. Միքայէլեանց պ. Տիգ. մհի. Թովմասեան. Ընկ. Արամեանց. պ. Ա. մհի. Անանեանց. պ. Մ. Տէր Յովսէփեանց. Ընկ. Խաչատուր Տ. Յակոբեանց 10ական դռան. պ. Ա. Տ. Օհանեանց 15 դռան. պ. Յակովբ Խաչատուրեան 25 դռան. պ. Նազարբէկեանց 12 դռան: Ընդհանուր գումար որ է 980 դռան՝ որից դեռ 235 դռանը չէ ստացված:

Ընդհ. ծախք 2.Q Նոյեմբեր 1894-ից մինչև 15 յունիս 1895: Ուսուցչի ռոճիկ 391 դռան, ուսուցչի ճանապարհածախս Դավրէժից մինչև Միանդապ 20 դռան. դասագրքեր 41 դռան. վառարան 21 դռան, եկեղեցւոյ գումարն մի ժամագիրք 12 դռան. վարժարանի սենեակի վարձ 20 դռան. (Թէր հաշիւ): Ընդհ. գումար որ է 505 դռան. իսկ պատրաստ դրամագլուխ 240 դռան որ տեղւոյն հոգաբարձուների ձեռքով դրւած է տոկոսի: Յայտնելով մեր շնորհակալութիւնը հրապարակով վերոյիշեալ անձանց, լիայոյս ենք որ ուրիշներն էլ չեն զլանալ իրենց օգնութիւնը Միանդապի թշուառ խօս ու աղքատ հայերի ուսումնարանին: Եթէ ոչ հակառակ դէպքում այլ ևս չէ կարելի շարունակել, որ ովհետև Միանդապ բնիկ ժողովուրդը նիւթ. սպէս խիստ անձուկ վիճակի մէջ գտնւելով չ է կարող ինքը ուսումնարան պահել:

Բարեկարգիչ հայոց Մարաղայի և Միանդապայ եկեղեցեաց Տաճատ քհնյ. Սրապիոնեան.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Ճուշի. 22 Օգոս. 95

Ձեր լրագրի 14 համարում Ճուշիից Թ. ստորագրութեամբ նամակագիրը մի ակնարկ ձգելով ընդհանուր հայ հոգևորականութեան վրայ, վերջն իւր մա ռացու թոյնը ժայթքում է դէպի ինձ: Նա գրա ւմ է որ Տէր Խ. այնքան է զարգացած որ կարող յանում է հասկանալ թէ ինչ միջոցներով կարելի է անձնական շահերին զոհել հասարակական ը, թէ ինչ տեսակ խարդաւանքներ են հարկաւոր որ հասարակական օգտաբեր գործքերին վնասելու» եայլն եայլն: Ես կը լռէի և ն բողութիւն կլնդրէի, եթէ պ. Թ. լոկ գ ոէր խօսքեր շռայլելու փոխարէն, գոնէ քաջու թիւն ունենար ցոյց տալու թէ՝ որ հասարա ական գործի մէջ իմ թոյլ տւել ինձ մի այ լպիսի դեր խաղալ: Իմ կարծիքով եթէ լինէր. նա չէր խոյս տալ գրելուց. եթէ սուտ սուտ յօրինելու այդչափ ընդունակ է, ին չու ճշմար ութիւնը չգրել:

Երկրորդ «առաջներում այդ քահանան վայելում էր երիտասարդութեան խորին յարգանքը, բայց դիմակը բացւելով, երիտասարդութիւնը երես շուռ տւաւ»:

Կնշանա կէ որ երիտասարդութիւնը ինձ յարգանք յ արժանի համարելով յարգել է, բայց պ. Թ. չէ գրում թէ ինչու համար է յարգել, և նոյնպէս չէ գրում թէ ինչու, որ անպատու ութեանս համար երես շուռ տւաւ, ինչ դիմ ակ էր այդ որ բացւեց: Պ. Թ. ոչ քաջութի ն ունի և ոչ արդարութիւնը և ճշմարտ ութիւնը գրելու ընդունակութիւն:

Շատ լաւ կանէր պ. Թ. եթէ փոխանակ զանազան անտեղի և պատեհ-պատ մանուածներով խօսելու, ուղղակի փաստերին անցնէր:

Երրորդ՝ «խրախուսեց և գրիչ առնելով սկսեց պամֆլէտներով գրաղւել և տպագրել տալով ժողովրդի մէջ ցրել»:

Պ. Թ. ինչու չէ այդ գրքուկների անունները տալիս, որն է արդեօք պամֆլէտ, և դրանց մէջ իբրև հայելու որոշ կեանքի պատկերներ կտեսնէք, ինչու չէք յիշում, կամ ինչու դորանց մէջ եթէ արդար և ճիշտ չէ, ձեր կամ ձերայինների տգեղ կեանքի պատկերներն էք տեսնում և փոխանակ ուղղելու, մաքրւելու, հայհոյանք կարդում: *)

Չորրորդ՝ «բաւական չ՚համարելով այդ, սկսել է այժմ էլ քիթը խոթել ընտրական ժողովների մէջ և ժողովրդի խղճալուր ձայնը նուազացնել»:

Ընթերցողը տեսնում է որ նախ քան անցեալ տարւայ թեմական դպրանոցի մէջ ծագած անբաւականութիւնները, պ. Թ. ոչ մի ընտրողական գործում իսկ խառնւիլը չէ գրում և չէր էլ կարող գրել, որովհետև նոյն ժամանակին է սկսել մի քանիսների անտեղի անբաւականութիւնը դէպի ինձ: Այդ դէպքից յետոյ էլ ոչ մի ընտրութիւն չէ եղած (չեմ իմանում զուցէ պ. Թ. քաղաքական իշխանութեան կողմից եղած ընտրութիւնների համար է գրում) բացի մեր Մեղրեցւոց եկեղեցւոյ երեցփոխանական ընտրութիւնից:

Առաջին ընտրութեան ժամանակ որը եղել է քանի ամիս սրանից առաջ, ես չեմ եղած. ես եղել եմ պ. Իւան Զուրաբեանցի տանը նրա որդու թաղման պատճառով: Երկրորդ անգամ թէ և գործակալ Գ. քահանան հրաւիրել է ինձ օգնելու, չեմ գնացել. իսկ երրորդ անգամ ներկայ է եղել և հայր Սաթունեանցը. թէև ինձ ասացին որ մնամ հաւաքւած ժողովրդականները մեզ ճանաչացնելու, ես չմնացի գնացի տուն: Չգիտեմ, ուրեմն ինչ ընտրութիւն է, որտեղ ես իբր «ժողովրդականով ձայնն» ուղեցել եմ նուազացնել:*)

Խորէն քահանայ Իսկանդարեան.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեր թշնամիները չեն դադարում ամենակեղտոտ միջոցների դիմել «Շաւիղին» վնաս հասցնելու համար: Մօտ օրերս դիմել են մատնութեան. բարեբաղդաբար կառավարութեան արդարադատութիւնը ազատեց թերթին և յոյս ունենք որ նա կը փշրէ մեր թշնամիների ամէն կեղտոտ դաւերը: Խնդիրը այն է որ անյաջողութիւնից աւելի կատաղած, այդ վատ արարածներն այժմ սկսել են այստեղ այնտեղ իրենց արած կեղտերը մաքրել, մեզ կեղտոտելու ճգնելով: Մեր գործունէութիւնը պարզ է և հիմնւած ճշմարտութեան, ազնւութեան վրայ. մենք ոչ դաւել գիտենք և ոչ էլ էլ փսփսոցների ու մատնութիւնների ընդունակ. ինչ որ գործում ենք, բացարձակապէս ենք անում և հասարակութեան օգտի համար: Թողամաչեն նրանք, որոնք քսու են, ստորերկրեայ ճանապարհներով են մրցում և որոնք մի քանի անգամ խարանւել են իբր մատնիչներ: Ով որ ականջ ունի լսելու՝ թող լսի:

—

Մեզ գրում են Ռաշտից, որ Տէր Օհանեանը դատարանի առաջ ստորութիւն է ունեցել լիովին ուրանալու իր՝ թերթիս գլխ. աշխատակցի հետ ունեցած վայրենի վարմունքը: Տէր Օհանեանից այդքանը սպասելի էր: Չէ որ այդպիսի արարածները քաջութիւն իսկ չ՚ունեն անձնասէր լինելու: Հաւատացած ենք, որ վկաները պիտի ապացուցանեն Տէր Օհանեանի միանգամայն ստախօս լինելն ևս:

—

Մեզ հաղորդում են որ անցեալ օր, մի ինչ որ հայ հասարակութեան ոչ մի օգուտ չը տւող Սուլէյմանխանի թաղման են տարել Գասպարեան խալֆայանոցի աշակերտները մօտ 2 վերստ ճանապարհ, որից վերադառնալիս, պարսիկ մանուկներ քարերով այդ աշակերտներից երկուսի գլուխն են պատռել: Ի՞նչ է նշանակում նախ թաղման տանել դպրոցի աշակերտների և երկրորդ՝ այն էլ հասարակութեան ոչ մի օգուտ չը տւող անձի յուղարկաւորութեան: Բաւական չէ ինչ Գասպարեանը փչացնում է հայ սերնդին՝ վարժեցնելով նրանց քծնութեան և գձուծութեան: Մենք զարմանում ենք միանգամայն որ Թէհրանի հայ հասարակութիւնը և փոխ. վարդապետը հանդուրժում են դպրոցի մէջ իբր վարժապետ պահել մի, ով գիտէ, որպիսի ապականւած անցեալով, ոչ մի ցենզ չունեցող և ամէն մի քայլում ապականութիւն ու կեղտ միայն արտադրող արարածի, որպիսին այդ Գասպարեանն է: Մեզ մնում է մտածել ուրեմն որ Թէհրանի հայ հասարակութիւնը կազմւած է անզգայ, անմիտ և իրենց որդիների փչանալու վրայ անհոգութեամբ նայող բուսային անհատներից. ապա թէ ոչ նրանք չը պիտի անհոգութեամբ դիտէին 25 տարուց ի վեր իրենց սերունդը ապականող մի արարածի արածները, առանց նրան վաղուց վռնտած, զզւանքով դուրս նետած լինելու կրթութեան վայրերից, որոնց նա պղծում է իր ներկայութեամբը:

—

Կովկասի թերթերը հաղորդում են որ իբր թէ Կովկասին յայտնի Քերիմ աւազակապետը այնտեղ է և միացել է հռչակաւոր Նաբու հետ: Այդ լուրը բոլորովին և հիմնովին սխալ է, որովհետև Քերիմը այժմ Թէհրան է գտնւում և հանգիստ ու «պատւաւոր» կեանք է վարում. նա այլ ևս կորցը ել է իր նախկին ընդունակութիւնը՝ բոլորո-

---

*) Տէր հայրը այստեղ կեղծում է. պամֆլէտներ եղել են և ամենակեղտոտ պամֆլէտներ, որոնց բովանդակութիւնը յիշելն անգամ ամօթ է, իսկ տէր հօրը պատիւ չէ բերում պաշտպան հանդիսանալ այդ գրւածքներին:

Ծ. Խմբ.

**) Այստեղ հետևում է մի շարք խիստ անվայել և փողոցային խօսքեր. ուղղւած պ. Թ-ին մենք չենք կարող տպել այդ տեսակ խօսքեր որոնք վայել չեն ոչ միայն մի քահանայի, այլ և մի փողոցայինի:

Ծ. Խմբ.

վին խրւած լինելով այլասերող զւարճութիւնների մէջ։

—

Մարաղայից մեզ գրում են որ Դավրէժում «կօնձի» (կոնցերտ) տւող աշուղները այժմ այնտեղ են գնացել հասարակութեան ականջները խլացնելու համար։ Պատրաստվում են և շուտով տալու են «կօնձի» տալ։

—

Սուլդուզից անմխիթար լուրեր են հասնում, այնտեղի դպրոցական գործի վերաբերմամբ։ «Մի քանի փառեր, որոնցից երեքն են կոյր Բաքախանը, քեօխա Քեարամն և Այվազը, մեծ արգելքներ են յարուցանում վարժապետների դէմ։ Որդիք Բ. Արզումանեանները 150 թուման փող էին տւել որ մի նոր ուսումնարան շինւի Նաղադէ գիւղում։ Բայց այն օրից որ խեղճ պ. Ստեփան Թարվէրտեանը ձեռնարկեց այդ գործին, շարունակ արգելքների հանդիպեց վերոյիշեալ անձերի կողմից։ Այժմ էլ այդ փառերը գիւղատէր խանին մատնում են թէ «դպրոցը շինվում է ռուսահպատակի փողով, վերջը այնպէս կանեն որ գիւղը ձեռքիցդ կը խլեն» և այլն. խանն էլ հաւատալով այդ յիմար խօսքերին, ուսումնարանը փակել է տալիս, Ստեփան Թարվէրդեանցի տունն է թալանում, իրեն էլ մի լաւ ծեծել տալիս և գիւղից վանում։ Պարոնը Թաւրէզ է գնացել հարկ եղած տեղերը դիմումներ անելու»։

—

Մեզ լուր է հասնում, որ սեպտ. 28-ին երեկոյեան ժամը 6-ին Վանում, փողոցի մէջ դաշոյնահար անելով սպանել են յայտնի դաւաճան և մատնիչ, միևնոյն ժամանակ ժողովրդի անխնայ կեղեքիչ Յովհաննէս աղա Տէր Պօղոսեանին։

—

Շիրազից պ. Միր. Յովհաննիսեանը մեզ հաղորդում է որ այնտեղ են եկել երկու տէրտէրներ. մէկը վարդապետ՝ որ ինքն իրեն Նաքուզուդոնոսորի սերնդից է համարում և միւսը իր բարեկամը— մի ծերունի։ Դրանք իջևանում են հայոց եկեղեցում, իրենք իրենց ունեցածը գողանում են և ապա գանգատ տալիս որ հայոց եկեղեցում կողոպտւել են. բարեբաղդաբար արդարութիւնը երևան է գալիս։ Այդ տարի խաչագողները դէպի Սպահան և Թէհրան են գնում, ուստի և պարոնը պարտք է համարում զգուշացնել բոլորին։ Վարդապետը միջահասակ է, շէկ, երկար մօրուքով և շատ երկար մազերով. իր ընկերը ալեւր երկար մօրուքով։ Թէհրանցիք մէկին նոր ճանապարհ դրին, երևի միւսին էլ բաղտ կունենան տեսնելու։ Յոյս ունինք որ այս անգամ փոխ. հայրը չի խաբւիլ։

—

Օդեսսայից, Գրիգոր քահանայ Խորպասանճեանը, որի մասին մի կծու թըղթակցութիւն գրել էր «Շաւիղի» № 28-ում, մեր թերթի գլխ. աշխատակիցը այդ քաղաքում եղած ժամանակ, մեզ ուղարկում է մի հերքում։ Նա ասում է որ եկեղեցին ինքը չէ շինել և որ նրա ձեռը հայկական է, որ իր՝ Խրիմեանի հետ, ցենզորութեանը մասին եղած հեգնական խօսակցութիւնը չէ եղել և որ ինքը այնքան լաւ քահանայ է, որ Խրիմեանը 1886 թւին նրան անւանել է «Ս. Ղևոնդի հոգին կրող, հայրենասէր քահանայ»։ Եւ վերջապէս որ, եթէ կուզենք, կարող է հրատարակութեան տալ իր՝ ծառայութեան ցուցակը։ Մեր պատասխանը կարճ կը լինի։ Գրիգոր քահանան Օդեսսայում և այնտեղից անցնող բոլոր հայերին ծանօթ է որպէս ամենակեղտոտ մի մարդ, որ ոչ մի ստոր միջոց չէ խնայում ուրիշների վնասելու համար. մենք իր եկեղեցու հետ գործ չունինք, այլ իր փոփոխած եկեղեցական հագուստները և պատկերները մեր գլխ. աշխատակցի համար անծանօթ են թւել հայկական եկեղեցուն։ Խրիմեանը ունեցել է այդ խօսակցութիւնը մի քանի վկաների առաջ, որոնք իրենք են պատմել մեր գլխաւոր աշխատակցին և տէր հայրը—մենք հաստատ գիտենք—ցենզոր է Օդեսսայում՝ հայկական մասի։ Խրիմեանի 86 թւի գովասանական նամակը ոչ մի նշանակութիւն չունի, որովհետև Վեհափառը անցեալում շատ այդպիսի և աւելի գովասանական նամակներ էպրել առաջին հանդիպած պառաւախօս պարծեցող կամ մեծ մեծ խօսող անձերի։ Այս խօսքերից յետոյ սպասում ենք որ Օդեսսայից ևս մեզ գրեն քահանայի քաջագործութիւնների մասին։

—

Մեշէդիսէրից, պ. Ներսէս Տէր Յովհաննիսեանը մի յատուկ նամակով խնդրում է մեզ յայտնել, որ 12 տարի տառապած լինելով փորաճճուից շատ բժիշկների (նոյն իսկ Կովկասի) դեղեր փորձած լինելուց յետոյ, կարդացել է մեր թերթի մէջ Մհի. Յորդանան Եղիազարեանի դեղի յայտարարութիւնը, գիմել է, ստացել, գործածել է և ահա, այժմ լիովին ազատւել է ճճուից, որի համար և հրապարակով յայտնում է իր շնորհակալութիւնն ու խորհուրդ է տալիս այդ ճճուից տառապողներին՝ դիմել Մհի. Եղիազարեանցի դեղին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽԱԴՆ ԼՈՒՐԵՐ

—

Նմոյշներ Թէհրանի «Աստղ-Արեւելեան» կոչւող ընկերութեան թարգմանութիւններից, իրենց հրատարակութեամբ լոյս տեսնող հեռագիրներից քաղւած։

Ամենավերջին հեռագիրներ.

Լոնդոնից 30 ի հեռագրից թարգմանելով ռուսաց նոր կազմւած ընկերութեան մասին, սոյն անգլերէն խօսքերը «Russian government guarantees a dividend of 5%» (ռուսաց կառավարութիւնը ապահովացնում է 5% մի շահ) թարգմանել են «որի արժէ թըղթերին հարիւրին հինգ շահն ռուսաց կառավարութիւնն երաշխաւորում է»։

Բայց թարգմանութեան գլուխ գործոցը գտնվում է Լոնդոնում, Ստրանդ թաղի Չըրչ-Քորթ փողոցի պայթիւնը հաղորդող հեռագրի մէջ։

«Աստղ-Արևելեան» ընկերութիւնը ըստ երեւոյթին պարսիկ է, որովհետև չը գիտէ որ մեծ տառով սկսող բառերը մի նախադասութեան մէջ՝ անպատճառ յատուկ անուն են լինելու։ Եւ ահա հեռագրի սոյն խօսքերը «a house in Church Court in the Strand» թարգմանել են «Ծովի եզերքը եղող եկեղեցու մօտ գտնւած մի տան մէջ»։ Թարգմանիչը ահա թէ ինչ է մտածել թարգմանելիս. Church-եկեղեցի. Court-բակ (ոչ թէ բակ, այլ դուռ, պալատ, ատեան), Strand-ծովեզր (եզր, ափ). և այսպիսով Strand թաղը ծովեզր է դառնում, մի ծով էլ է բերվում Լոնդոնի կողքին և Church Court դառնում է «եկեղեցու բակ». այդպիսի թարգմանչի ձեռքը անշուշտ Լոնդոնի Chairing-Cross թաղը կը փոխէ մեծ խաչի և Christian-Street էլ «քրիստոնեայ փողոց»։ Զէ, թշւառ չէ «Աստղ-Արևելեան» ընկերութիւնը, եթէ թարգմանիչն այդպէս է։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌԷՅՏԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

—

Լոնդոն. 24 հոկտ. (Ն. տ.) Երէկ երեկոյ Կինգստոնում, ի պատիւ Սըր Րչարդ Տէմպլի տրւած մի հայկերոյթի ժամանակ, Կրզըն— արտ. գործոց փոխ քարտուղարը խօսելով չեշտեց նրա վրայ. որ արտ. գործոց նախարարութիւնը պարտաւոր է միջոցներ ձեռք առնել արևելքում անգլիական վաճառականութեան դիրքը ընդարձակելու համար, որովհետև պատճառներ կան վախենալու, որ դիրքը վնասւած է և արժանի յատուկ ուշադրութեան։

Ս. Պետերբուրգ. 24. Երէկ զրահաւոր նաւեր ուղարկւեցին Ռուսաց Խաղաղական Օվկեանոսում ունեցած նաւատորմը օրեղացնելու համար։ Գնացողները պատւէր ունին Կորէայի եզերքները շրջել և պատրաստ լինել պէտք եղած դէպքերի համար։

Փարիզ. 25, Ֆրանսիայի Մադակասկարի հետ կապւած դաշինքի զօրութեամբ, կղզեթագուհին ընդունում է ֆրանսական կատարեալ վերահսկողութիւնը (պրոտեկտորատ) եւր ֆրանսացի ընդհանուր տեղեկալի նշանակելը։ Նոյն պայմանի համեմատ Ֆրանսիան կը փրէ ներքին և արտաքին ֆինանսական գործը, նա և զինւորական ոյժի կազմութիւնը, այց պատասխանատուութիւն չի յանձն առնիզանազան կերքին դաշինքների կամ թագուհու տւած արտօնութիւնների (կոնսեցիա) համար։

Լոնդոն. 27. Չինաստանը նոյն 7-ին վճարէ Ճապոնեային 30 միլիոն տայելի ատերազմական տուգանքը»—Եգէնից հեռագրւմ են որ Թագաւոր Մենէլիքը մեռել է։ Մակօնը դաշինքներէ կապւմ Իտալոյոց հետ։

Փարիզ. 28 հոկտ Պատգամաւորների ժողովում այս երեկոյ, Հարաւ. երկաթուղիների սկանդալների վերաբերութեամբ երբ վիճաբանութիւն էր լինում, պ. Րիբօն եւ միւս այն ամբաստանութիւնները որոնք անում էին սօցիալիստները, որ իբր թէ կառավարութիւնը քննելում է այդ խնդիրը՝ վարդապետ կամենալով մի քանի պատգամաւորների գործերը։ Չը նայելով Պ. Րիբօի այդ ժխտման, Պ. Րուանէյի առաջարկութեամբ և 10 ձայնի առաւելութիւնով վճռւեց մի նոր քննութիւն բանալ. Այդ վճռի պատճառով Կաբինետը հրաժարւեց։ Նախագահ Ֆօրը ընդունեց կաբինետի հրաժարականը։

Փարիզ. 29 հոկտ. Րիբօի նախարարութեան յաղթւելու պատճառը այն էր, որ սօցիալիստները և պահպանողականները համերաշխ եղան։ (Հար. երկաթուղու գործի համար նոր քննութիւն բանալու վճռում)։

Ս. Պետերբուրգ. 29. հոկտ. Մի ուրիշ զրահաւոր նաւ, նաւաստիների մի խմբով, պատերազմական մթերք և զէնք բարձած, դուրս գնաց Օդեսսայից՝ Խաղաղականի նաւատորմի համար։—«Նով. Վրէմեան» գրումէ որ Կորէայի թագաւորը մի ուրիշ թագուհի է ընտրել իր համար և իր վրայ առել «կայսր» տիտղոսը. դրա դէմ բողոքել են պետութիւնները։

Լոնդոն. 30 հոկտ. «Times»-ի Թէհրանի թղթակիցը հեռագրում է որ ռուսաց մի ընկերութիւն է կազմւել 2 և կէս միլիոն ր. դրամագլխով. ընկերութեան նպատակն է մի ճանապարհով Թէհրանը Կասպից ծովին միացնել։ Ռուս Կառավարութիւնը դրամագլուխի 5 0/0 շահը ապահովեցնում է։

Լոնդոն 29 հոկտ. Կէս գիշեր. մի սարսափելի պայթիւն տեղի ունեցաւ Ստրէնդ թաղի Չըրչ-Քորթի մի տան մէջ։ Տունը հիմնայատակ եղաւ. Նրա երկու կողքերի շէնքերն էլ մասամբ վնասւեցին։........(debis բառ որ ոչինչ չէ նշանակում) մի վարկեանում կրակ բռնեց. բնակիչներից 6 ը սպանւեցին. Նրանց մարմինները բոլորովին այրւեցին։ 22 անձեր վնասւեցին. ազէտի պատճառը յայտնի չէ։

Արտօնատէր հրատարակիչ՝
ԱՆԴՐԷՍՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

GRAND HOTEL
ԳՐԱՆԴ ՕՏԷԼ
Հիւրանոց
ԱԼԱ-ԷԴ-ԴՕՎԼԷՅԻ ՓՈՂՈՑՈՒՄ
ԹԷՀՐԱՆ
6—50

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ
Տարեկան երկու գիրք
Բաժանորդագինը 2 ռուբլի։ Հասցէ
Schoucha (Russie) Mr. Ervand Lalayan
Հրատարակիչ—խմբագիր՝ Երւանդ Լալայեանց։
3—3

ԳԷՈՐԳ ՂԱՐԱՋԵԱՆ
Բանւորների ապահովագրութիւն Եւրոպայում և Ռուսաստանում
(արտատպած „Մուրճ" ամսագրից)
Գինն է 30 կ.
Զուտ արդիւնքը յատկացրած է Տաճկահայ սովեալ գաղթականներին և Ղարսի ու Երևանի նտհանգների կարօտեալներին։
Դիմել Թիֆլիզ. Կենտրոնական գրավաճառանոց կամ „Մուրճի" խմբագրութեան
3—3